

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

---

Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում  
Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և  
ստանդարտացման աշխատանքային խմբեր  
Կազմավորման և գործունեության կարգը



ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ՄԱՐՄԻՆ

ԵՐԵՎԱՆ 2022

## Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ՀԱՍ 1.0-2013 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ» ստանդարտով

### Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից:

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության ՏՀ 28 «Ստանդարտացման մեթոդաբանություն» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի կողմից:

3 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2022 թվականի հուլիսի 26-ի N 113- Ն հրամանով:

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N [1545-2022](#)

6 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ԿՆ 1.1-2005 ՓՈԽԱՐԵՆ

*Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության ինտերնետային կայքում ([www.sarm.am](http://www.sarm.am)):*

**Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության թույլտվության**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

---

## Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և ստանդարտացման աշխատանքային խմբեր Կազմավորման և գործունեության կարգը

Стандартизация в Республике Армения

Технические комитеты по стандартизации и рабочие группы по стандартизации  
Правила создания и деятельности

Standardization in the Republic of Armenia

Technical committees for standardization and working groups for standardization.

Rules of organization and activity

---

Գործարկման թվականը՝ 01.09.2022 թ.

### 1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների, ինչպես նաև ստանդարտացման աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ՏՀ (ԱԽ)) կազմավորման, գործունեության և լուծարման կարգը:

Տեխնիկական հանձնաժողովները, որոնք կազմավորվել են մինչև սույն ստանդարտի գործարկումը և 3 տարուց ավելի ժամանակահատվածում չեն ծավալել որևէ փաստաթղթավորված գործունեություն, ենթակա են լուծարման: Լուծարված ՏՀ-ի համարը չի տրվում նոր կազմավորվող ՏՀ-ին:

Սույն ստանդարտը նախատեսված է ՏՀ (ԱԽ) կազմավորման և գործունեության իրականացման ընթացքում Ստանդարտացման ազգային մարմնի և ՏՀ (ԱԽ) անդամ կազմակերպությունների կողմից կիրառման համար:

Սույն ստանդարտը չի տարածվում ռազմական արտադրանքի ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգի վրա:

### 2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

## ՀԱՏ 1.12-2022

ՀԱՏ 1.0-2013 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Հիմնական դրույթներ

ՀԱՏ 1.1-2005 Ստանդարտացման ազգային համակարգ. Տերմիններ և սահմանումներ

ՀԱՏ 1.2-2013 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Ազգային ստանդարտների մշակումը

ՀԱՏ 1.5-2013 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Ստանդարտների կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը, բովանդակությանը և նշագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

ՀԱՏ 1.6-2006 Ստանդարտացման ազգային համակարգ. Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման կանոններ և մեթոդներ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտից օգտվելիս նպատակահարմար է ստուգել վկայակոչված ստանդարտների գործելը՝ ըստ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմված ստանդարտների համապատասխան կատալոգների՝ և ընթացիկ տարում հրատարակված համապատասխան տեղեկատուների: Եթե վկայակոչված փաստաթուղթը փոխարինված է (փոփոխված է), ապա սույն ստանդարտից օգտվելիս պետք է ղեկավարվել փոխարինված (փոփոխված) ստանդարտով: Եթե վկայակոչված փաստաթուղթը չեղյալ է հայտարարված առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում վկայակոչված է այդ ստանդարտը կիրառվում է այն մասով, որը չի շոշափում այդ վկայակոչումը:

### 3. Տերմինները և սահմանումները

Սույն ստանդարտում կիրառվում են տերմիններ՝ ըստ ՀԱՏ 1.1, ինչպես նաև հետևյալ տերմինները՝ իրենց համապատասխան սահմանումներով.

**3.1 ստանդարտացման աշխատանքային խումբ՝** շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների ժամանակավոր (մինչև 2 տարի ժամկետով) կազմավորում է, որը ձևավորվում է կամավոր հիմունքներով՝ ազգային ստանդարտների մշակման, ինչպես նաև ազգային, միջպետական, միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման բնագավառներում Ստանդարտացման ազգային մարմին մասնագիտական դիրքորոշման ներկայացման համար:

Աշխատանքային խումբը կազմավորվում է տվյալ ոլորտի տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում:

### 3.2 ստանդարտացման ազգային համակարգ՝ <sup>2</sup>

նորմատիվ փաստաթղթերով կանոնակարգված ստանդարտացման աշխատանքների կազմակերպման և վարման փոխկապակցված կանոններ և դրույթներ.

<sup>1</sup> Վկայակոչված ստանդարտների գործելու վերաբերյալ տեղեկատվությունը ստուգել Ստանդարտացման ազգային մարմնի պաշտոնական կայքից:

<sup>2</sup> Սահմանված է ըստ «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

Ազգային, միջպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ստանդարտացման աշխատանքների մասնակիցների համաձայնեցված փոխհամագործակցության ապահովման մեխանիզմ, որն իրականացվում է ստանդարտացման փաստաթղթերի մշակման, հաստատման, հրատարակման, կիրառման, փոփոխության և դադարեցման ստանդարտացման միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա՝ կիրառելով նորմատիվ, տեղեկատվական, գիտամեթոդական, ֆինանսական և այլ ռեսուրսներ:

## **4 Ընդհանուր դրույթները**

### **4.1 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների և ստանդարտացման աշխատանքային խմբերի կազմավորման նպատակը և խնդիրները**

**4.1.1** ՏՀ (ԱԽ) կազմավորվում են ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների և դրանց փոփոխությունների մշակման, դրանց վերանայման, գործողության դադարեցման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման, ինչպես նաև ազգային, միջպետական, միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման բնագավառներում աշխատանքների կատարման համար:

ՏՀ (ԱԽ)-ի աշխատանքներին մասնակցությունը կամավոր է որում ընդգրկված մասնագետները տվյալ ՏՀ (ԱԽ)-ի անդամ հանդիսացող և ստանդարտացման որոշակի ոլորտներում շահագրգիռ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներ են:

ՏՀ կազմավորում են գործունեության որոշակի ոլորտներին կամ ստանդարտացման օբյեկտներին համապատասխան՝ հաշվի առնելով ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային, և միջպետական տեխնիկական հանձնաժողովների անվանացանկերը:

Կազմավորվող ՏՀ-ի գործունեության ոլորտը չպետք է կրկնօրինակի մեկ այլ ՏՀ-ի գործունեության ոլորտը:

**4.1.2** Հիմնավորված դեպքերում կարող է կազմավորվել ՏՀ, որի գործունեության ոլորտը միջազգային և տարածաշրջանային ոլորտում չունի նմանօրինակը կամ երկու և ավելի գործող ՏՀ կարող են միավորվել՝ ստեղծելով մեկ ընդհանուր ՏՀ:

**4.1.3** Աշխատանքային խումբը ստեղծվում է որոշակի ոլորտի (որոշ դեպքերում նաև ոլորտների) մեկ կամ մի քանի ազգային ստանդարտների մշակման համար, որոնց գործունեության ոլորտին համապատասխան Ստանդարտացման ազգային մարմնում բացակայում է ՏՀ: Եթե ԱԽ-ին ամրագրված ոլորտի աշխատանքները 2 տարուց ավելի ժամանակահատվածում կրում են շարունակական բնույթ, ԱԽ-ն պետք է վերակազմավորվի ՏՀ-ի:

**4.1.4** Գործունեությունն իրականացնելիս ՏՀ (ԱԽ) ղեկավարվում են ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման ոլորտներում գործող օրենսդրությամբ, իրավական այլ ակտերով, ստանդարտացման

## ՀԱՏ 1.12-2022

ազգային համակարգի ստանդարտներով, միջազգային, միջպետական և տարածաշրջանային ստանդարտներով և սույն ստանդարտով:

**4.1.5** S< (ԱԽ) չունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Գրագրություն վարելու համար S< (ԱԽ) կարող են ունենալ սեփական ձևաթուղթը՝ անհրաժեշտ տվյալներով:

**4.1.6** S< (ԱԽ) աշխատանքների համակարգումը և մեթոդական ղեկավարումը իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմինը:

### **4.2 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի գործունեության ոլորտը**

**4.2.1** Ստանդարտացման բնագավառում S< կամավոր հիմունքներով իրականացնում է հետևյալ աշխատանքները.

- ստանդարտացման աշխատանքների ծրագրի (անհրաժեշտության դեպքում) մշակում ըստ ստանդարտացման օբյեկտների կամ ամրագրված գործունեության ոլորտների,

- ազգային ստանդարտների նախագծերի մշակում՝ հաշվի առնելով ներդաշնակեցումը միջազգային, տարածաշրջանային, միջպետական և այլ պետությունների ազգային ստանդարտներին,

- ազգային ստանդարտների վերանայում,

- Հայաստանի Հանրապետությունում միջազգային, միջպետական, տարածաշրջանային ստանդարտների, ինչպես նաև այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

- համագործակցություն Ստանդարտացման ազգային մարմնի, ստանդարտները կիրառող կազմակերպությունների, այդ թվում սպառողների և նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների, փորձարկման լաբորատորիաների, սերտիֆիկացման մարմինների և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ:

**4.2.2** Ստանդարտացման ազգային մարմնի առաջարկությամբ միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտացման բնագավառում S< կազմակերպում և իրականացնում է հետևյալ աշխատանքները.

- ա) միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների նախագծերի մշակում կամ մասնակցություն դրանց մշակման աշխատանքներին, և ստանդարտների նախագծերի փորձաքննություն,

- բ) մասնակցություն տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերի կազմման, դրանց փոփոխության աշխատանքներին,

- գ) մասնակցություն իր գործունեության ոլորտին համապատասխան միջպետական տեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին,

- դ) մասնակցություն ստանդարտացման համանման միջազգային կազմակերպությունների տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներին,

ե) ԱՊՀ Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի (ՄՊԽ) աշխատանքային ծրագրերում ներառելու համար առաջարկությունների նախապատրաստում ըստ ամրագրված ոլորտների,

զ) քվեարկության նպատակով միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների նախագծերի, ինչպես նաև ՀՀ տարածքում դրանց կիրառման վերաբերյալ դիրքորոշման ներկայացում,

է) միջազգային և տարածաշրջանային ստանդարտների հիման վրա ընդունված ազգային ստանդարտների նախագծերի փորձաքննություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ, գ), դ), ե), զ), է) կետերում նշված խնդիրները ՏՀ կարող է կատարել շահագրգիռ կազմակերպությունների համապատասխան դիմումի դեպքում:

## **5. ՏՀ (ԱԽ) կազմավորման, վերակազմավորման ընթացակարգը**

**5.1** Ստանդարտացման ազգային մարմինը ստեղծում է տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը և համակարգում է դրանց գործունեությունը:

**5.1.1** ՏՀ (ԱԽ)-ի կազմավորման կամ վերակազմավորման մասին առաջարկությունը դրա անհրաժեշտության հիմնավորման հետ ներկայացվում է Ստանդարտացման ազգային մարմին:

ՏՀ (ԱԽ)-ի կազմավորման կամ վերակազմավորման մասին առաջարկությունը կարող է նախապատրաստված լինել նաև Ստանդարտացման ազգային մարմնի կողմից:

Հիմնավորման մեջ պետք է ներառվի ստանդարտացման օբյեկտների անվանական ցանկը կամ ՏՀ-ին ամրագրվող գործունեության ոլորտը:

**5.2** Ստանդարտացման ազգային մարմինը նոր ՏՀ կազմավորման կամ գործող ՏՀ վերակազմավորման մասին տեղեկատվությունը հրապարակում է Ստանդարտացման ազգային մարմնի պաշտոնական կայքում՝ սահմանելով 15 օրացույցային օր՝ ՏՀ-ին անդամակցության հայտ ներկայացնելու համար: Հայտի ձևը տրված է Հավելված Ա-ում:

**5.3** Ստանդարտացման ազգային մարմինը, ելնելով անհրաժեշտությունից, դիմում է շահագրգիռ կազմակերպություններին՝ առաջարկելով մասնակցել նոր կազմավորվող ՏՀ (ԱԽ) կամ վերակազմավորվող ՏՀ աշխատանքներին:

**5.4** Ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ստացված հայտերը, որի հիման վրա որոշում է կայացնում ՏՀ (ԱԽ) կազմում կազմակերպությունների և նրանց կողմից առաջարկվող ներկայացուցիչների անդամակցության վերաբերյալ:

**5.5** Ստանդարտացման ազգային մարմինը հրավիրում է նոր կազմավորված ՏՀ (ԱԽ) կամ վերակազմավորված ՏՀ-ի անդրանիկ նիստը: Անդրանիկ նիստը վարում է Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչը: Նիստի ընթացքում ընտրվում է ՏՀ (ԱԽ)-ի նախագահը անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

## ՀԱՏ 1.12-2022

ՏՀ (ԱԽ) կազմավորման մասին որոշումն ընդունելուց հետո քարտուղարը նախապատրաստում և Ստանդարտացման ազգային մարմին է ներկայացնում է ՏՀ (ԱԽ) կազմը:

**5.6** ՏՀ (ԱԽ) կազմը ներկայացվում է ազատ շարադրանքով՝ ներկայացնելով՝ ՏՀ (ԱԽ) անդամ կազմակերպությունների ճշտված ցանկը և լիազոր ներկայացուցիչների անվանական կազմը:

**5.7** Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով (Հավելված Գ) հաստատվում է ՏՀ անդամ կազմակերպությունների և լիազոր ներկայացուցիչների կազմը, նախագահի և քարտուղարի թեկնածությունները: Քարտուղար նշանակվում է Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչը:

**5.8** Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով ՏՀ նախագահը պետք է նախապատրաստի և հաստատի ՏՀ կանոնադրությունը: ՏՀ կանոնադրության օրինակելի ձևը տրված է հավելված Բ-ում:

Տեխնիկական հանձնաժողովի գործունեության ոլորտը, կառուցվածքը, ինչպես նաև տեխնիկական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների հիմնական գործառոյթները սահմանվում է տեխնիկական հանձնաժողովի կանոնադրությամբ, որը հաստատում է տեխնիկական հանձնաժողովի նախագահը:

## **6 ՏՀ (ԱԽ) ձևավորման և գործունեության սկզբունքները**

**6.1** ՏՀ (ԱԽ) անդամ կարող են լինել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց, գիտատեխնիկական, ինժեներական, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

**6.2** ՏՀ (ԱԽ) իրականացնում են գործունեությունը հետևյալ սկզբունքների հիման վրա.

- ՏՀ (ԱԽ) կամավոր անդամակցության՝ համապատասխան հայտի հիման վրա և տեխնիկական հանձնաժողովից դուրս գալու դիմումի հիման վրա,

- ՏՀ (ԱԽ) կազմավորման և դրա աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը բաց և հասանելի լինելու, եթե առկա չեն սահմանափակումներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**6.3** ՏՀ անդամակցությունը կարող է կատարվել երկու կարգավիճակով՝ որպես հիմնական անդամ կամ որպես դիտորդ (փորձագետ):

**6.4** ՏՀ հիմնական անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցում են ՏՀ նիստերին քվեարկելու իրավունքով:

ՏՀ դիտորդ հանդիսացող կազմակերպությունների ներկայացուցիչները իրավունք ունեն մասնակցել ՏՀ նիստերին և ներկայացնել իրենց կարծիքը քննարկվող բոլոր հարցերի շուրջ առանց քվեարկելու իրավունքի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՏՀ (ԱԽ) կարող են հրավիրել փորձագետ(ներ)՝ մասնագիտական եզրակացության համար՝ առանց ձայնի իրավունքի:

ԱԽ անդամակցությունը կատարվում է միայն մեկ կարգավիճակով: ԱԽ-ն չունի դիտորդ անդամի կարգավիճակ:

**6.5** ՏՀ անդամակցությունը, կարգավիճակի փոփոխությունը և ՏՀ (ԱԽ) կազմից դուրս գալն իրականացվում են շահագրգիռ կազմակերպության կամ տվյալ անդամի կողմից ներկայացված դիմումի համաձայն՝ Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով:

**6.6** Եթե հիմնական անդամի կարգավիճակ ունեցող կազմակերպության ներկայացուցիչը չի կատարել ՏՀ առջև ունեցած իր պարտականությունները կամ ՏՀ նախագահի հանձնարարությունները, երկու անգամ անընդմեջ չի մասնակցել քվեարկությանը, ապա ՏՀ նախագահի նախաձեռնությամբ նրա կարգավիճակը կարող է փոխվել դիտորդի կարգավիճակի՝ Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով:

Աշխատանքային խմբի անդամի երկու անգամ անընդմեջ քվեարկության չմասնակցելու դեպքում, դադարեցվում են նրա լիազորությունները աշխատանքային խմբի կազմում Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով :

**6.7** ՏՀ գրանցվում է Ստանդարտացման ազգային մարմնում՝ ստանալով հերթական համար:

**6.8** Ստանդարտացման ազգային մարմինը ՏՀ մասին տեղեկատվությունը տեղադրում է Ստանդարտացման ազգային մարմնի պաշտոնական կայքում:

**6.9** ՏՀ նշագիրը կազմվում է «ՏՀ» դասիչից և գրանցման հերթական համարից, օրինակ. ՏՀ 3: Նոր կազմավորված ՏՀ-ին չի կարող տրվել նախկինում գործող ՏՀ-ի համարը:

## **7 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի կառուցվածքը և կազմը**

**7.1** ՏՀ (ԱԽ) կառուցվածքը ներառում է

- ՏՀ (ԱԽ) նախագահ,
- ՏՀ (ԱԽ) քարտուղար,
- ՏՀ (ԱԽ) անդամներ:

**7.1.1** ՏՀ (ԱԽ) անդամ(ներ) կարող են հանդիսանալ 6.1 կետում նշված կազմակերպությունների և մարմինների ներկայացուցիչները:

**7.1.2** Տեխնիկական հանձնաժողովը պետք է կազմված լինի 7-ից ոչ պակաս շահագրգիռ կողմերից:

**7.1.3** Աշխատանքային խումբը և ենթահանձնաժողովը պետք է կազմված լինեն 5-ից ոչ պակաս շահագրգիռ կողմերից:

## ՀԱՏ 1.12-2022

7.2 ՏՀ ամրագրված ստանդարտացման առանձին օբյեկտների (ըստ գործունեության ոլորտի), ստանդարտացման աշխատանքների կատարման համար ՏՀ կառուցվածքում կարող են կազմավորվել ենթահանձնաժողովներ (ԵՀ):

7.2.2 ՏՀ ենթահանձնաժողովների կազմավորման անհրաժեշտությունը որոշում է ՏՀ-ն:

7.2.3 ԵՀ կառուցվածքը և կազմը նախապատրաստվում է ՏՀ քարտուղարի կողմից ՏՀ նախագահի և այլ անդամների հետ խորհրդակցության արդյունքում և հաստատվում է Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով:

7.2.4 Ընթացիկ աշխատանքը կազմակերպելու համար Ստանդարտացման ազգային մարմինը հրավիրում է ԵՀ անդրանիկ նիստը: Անդրանիկ նիստը վարում է Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչը: Նիստի ընթացքում ընտրվում է ԵՀ նախագահը ձայների պարզ մեծամասնությամբ:

7.3 ՏՀ (ԱԽ) կամ ԵՀ կազմում պետք է ընդգրկված լինի Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչ (ներկայացուցիչներ):

7.4 ՏՀ (ԱԽ) կամ ԵՀ աշխատանքներում մասնակցելու համար անդամ կազմակերպությունները առաջադրում են 3-ից ոչ ավելի մասնագետի՝ որպես այդ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներ:

7.5 ՏՀ (ԱԽ) կամ ԵՀ աշխատանքները ղեկավարում է նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչը:

### **8 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի (ենթահանձնաժողովի), աշխատանքային խմբի նախագահի, անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների և ՏՀ (ԵՀ) քարտուղարի հիմնական գործառույթները**

#### **8.1 ՏՀ (ԵՀ) նախագահի հիմնական գործառույթներն են.**

- ՏՀ (ԵՀ) աշխատանքների տարեկան ծրագրի նախապատրաստում (անհրաժեշտության դեպքում),

- ՏՀ (ԵՀ) աշխատանքների կազմակերպում և ղեկավարում,

- ՏՀ (ԵՀ) աշխատանքային նիստերի վարում,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում (այդ թվում նաև հասարակական կազմակերպություններում) ՏՀ (ԵՀ) ներկայացում՝ Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի համաձայնությամբ,

- այլ փորձագետների և մասնագետների ներգրավում ՏՀ (ԵՀ):

8.1.1 ՏՀ նախագահը պատասխանատու է ՏՀ տարվող աշխատանքների կատարման համար:

#### **8.2 ԱԽ նախագահի հիմնական գործառույթներն են.**

©SARM-Բոլոր իրավունքները պահպանված են

- ԱԽ աշխատանքների կազմակերպում և ղեկավարում,
- ԱԽ աշխատանքային նիստերի վարում:

### **8.3 Քարտուղարի հիմնական գործառույթներն են.**

- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) աշխատանքների կազմակերպում,
- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) նիստերի (այդ թվում առցանց ռեժիմով) անցկացման նախապատրաստում,
- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) աշխատանքների ծրագրի (առկայության դեպքում) կատարման վերահսկում,
- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) նիստերի որոշումների ձևակերպում,
- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) ներկայացված փաստաթղթերի քննարկման կազմակերպում,
- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) գրագրության վարում, (նիստերի արձանագրության կազմում),
- ՏՀ (ԵՀ) (ԱԽ) գործավարության իրականացում:

**8.3.2** Վերոնշյալ հիմնական գործառույթները տեխնիկական հաճնաժողովներում, ենթահանձնաժողովներում և աշխատանքային խմբերում իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչը:

### **8.4 ՏՀ (ԵՀ) և ԱԽ անդամների պարտականությունները**

**8.4.1** ՏՀ (ԵՀ) հիմնական անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներն ունեն հետևյալ պարտականությունները.

- մասնակցություն ՏՀ (ԵՀ) նիստերին,
- ՏՀ (ԵՀ) աշխատանքների ծրագրի (առկայության դեպքում) վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում,
- մասնակցություն քննարկվող բոլոր հարցերի քվեարկությանը:

**8.4.2** ՏՀ (ԵՀ) դիտորդ անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն.

- մասնակցել ՏՀ (ԵՀ) նիստերին առանց քվեարկելու իրավունքի,
- ներկայացնել իրենց կարծիքը ստանդարտների նախագծերի վերաբերյալ,
- ստանալ ՏՀ (ԵՀ) բոլոր աշխատանքային փաստաթղթերը,
- առաջարկություններ տալ ՏՀ (ԵՀ) աշխատանքների ծրագրի (առկայության դեպքում) վերաբերյալ:

**8.4.3** ԱԽ անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները.

- մասնակցություն ԱԽ նիստերին,
- մասնակցություն քննարկվող բոլոր հարցերի քվեարկմանը:

ԱԽ անդամներն իրավունք ունեն.

## ՀԱՍ 1.12-2022

- ներկայացնել իրենց կարծիքը ստանդարտների նախագծերի վերաբերյալ,
- ստանալ ԱԽ բոլոր աշխատանքային փաստաթղթերը:

**8.5** ՏՀ (ԵՀ) կամ ԱԽ անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները կատարում են իրենց պարտականությունները աշխատանքային տեղում կամ ՏՀ, ԱԽ և ԵՀ նիստերի (այդ թվում՝ առցանց ռեժիմով) ժամանակ:

### **9 ՏՀ (ԵՀ) և ԱԽ աշխատանքների կազմակերպման կարգը**

**9.1** ՏՀ (ԵՀ) կամ ԱԽ իր հիմնական աշխատանքներն իրականացնում է սույն ստանդարտի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան:

**9.2** ՏՀ (ԵՀ) աշխատանքները կատարում է ըստ աշխատանքների տարեկան ծրագրի (առկայության դեպքում):

**9.3** Ստանդարտների մշակումը (գործող ստանդարտների վերանայումը, փոփոխությունը, չեղյալ հայտարարումը) ՏՀ (ԱԽ) իրականացնում է ՀԱՍ 1.0, ՀԱՍ 1.2, ՀԱՍ 1.5, ՀԱՍ 1.6 ազգային ստանդարտներով սահմանված կարգով:

**9.4** ՏՀ (ԵՀ) կամ ԱԽ նիստերի որոշումներն ընդունվում են, եթե նիստին մասնակցել են ՏՀ (ԵՀ) և ԱԽ հիմնական անդամ կազմակերպությունների ոչ պակաս, քան 1/2-ը:

Եթե ՏՀ հիմնական անդամ կազմակերպության միակ լիազոր ներկայացուցիչ մասնակցությունը նիստ(եր)ին անհնարին է, ապա նրան, համապատասխան գրությամբ, կարող է փոխարինել ՏՀ հիմնական անդամ կազմակերպության այլ ներկայացուցիչ՝ քվեարկության իրավունքով:

**9.5** ՏՀ (ԵՀ) և ԱԽ որոշումները ստանդարտի նախագծերի, ծրագրերի և քննարկվող այլ հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության դրված հարցին ՏՀ (ԵՀ) և ԱԽ անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ:

ՏՀ նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց ռեժիմով: Հեռավար նիստերի ժամանակ քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով:

Ստանդարտի վերջնական խմբագրության վերաբերյալ որոշումն ընդունվում է առկա նիստին բանավոր քվեարկությամբ, իսկ առցանց նիստի դեպքում՝ էլեկտրոնային հաղորդակցման միջոցով:

ՏՀ (ԵՀ) կամ ԱԽ որոշումների ընդունման վերաբերյալ քվեարկության դեպքում յուրաքանչյուր անդամ կազմակերպություն ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ՏՀ (ԵՀ) և ԱԽ կազմում ընդգրկված իր ներկայացուցիչների թվից:

**9.6** ՏՀ (ԵՀ) կամ ԱԽ քարտուղարը ստանդարտների նախագծերի վերջնական խմբագրությունը ստանդարտների վերջնական խմբագրության ընդունման նիստի

արձանագրության հետ միասին ներկայացնում է ընդունման Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարին:

## **10 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների վերակազմավորման և լուծարման կարգը**

**10.1** Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները վերակազմավորվում կամ լուծարվում են Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով: Եթե 3 տարվա ընթացքում ՏՀ ամրագրված ոլորտում որևէ փաստաթղթավորված գործունեություն չի ծավալել, Ստանդարտացման ազգային մարմինը լուծարում կամ վերակազմավորում է տվյալ ՏՀ:

**10.2** Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովը կարող է վերակազմավորվել հետևյալ դեպքերում

- ամրագրված գործունեության ոլորտի ընդլայնում,
- ՏՀ անդամների 1/3-ի փոփոխության դեպքում:

**10.3** ՏՀ լուծարվում է հետևյալ դեպքերում.

- եթե ՏՀ կողմից չի կատարվել ՏՀ նախագահի կողմից հաստատված աշխատանքների տարեկան ծրագիրը (առկայության դեպքում),

- կատարված աշխատանքների մոնիթորինգի և (կամ) գործունեության անբավարար գնահատման արդյունքում,

- ՏՀ չի ապահովում ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանված աշխատանքային կարգը և ժամանակացույցը:

**10.4** ՏՀ-ի լուծարումից հետո պահպանվում է Ստանդարտացման ազգային մարմնի պատասխանատվությունը տվյալ ՏՀ կողմից մշակված ստանդարտների նկատմամբ:

**10.5** Լուծարված ՏՀ-ի համարը չի տրվում նոր կազմավորվող ՏՀ-ին:

**10.6** ՏՀ վերակազմավորման կամ լուծարման մասին Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի որոշման մասին տեղեկատվությունը տեղադրվում է Ստանդարտացման ազգային մարմնի պաշտոնական կայքում:

**Հավելված Ա  
(պարտադիր)  
Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի  
մասնակցության հայտի օրինակելի ձև**

**Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի աշխատանքների մասնակցության  
հայտ**

1. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի անվանումը
2. Հայտատուի անվանումը և հասցեն, կոնտակտային տվյալները
3. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի մասնակցության առաջարկի հիմանվորումը
4. Հայտատուի գործունեության ոլորտը ըստ ԱԴԳՏ\_\_\_ կամ ըստ ԱՏԳ ԱԱ\_\_\_:
5. Տեղեկություն գործող տեխնիկական հանձնաժողովներում հայտատուի մասնակցության մասին

**Հավելված Բ  
(հանձնարարելի)  
Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի  
կանոնադրության օրինակելի ձևը**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՀ համարը (միջազգային, եվրոպական և միջպետական հայելային ՏՀ համարները)

ՏՀ անվանումը

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

ստորագրություն

Ա.Ազգանուն

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_թ.

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

ՏՀ համարը (միջազգային, եվրոպական և միջպետական հայելային ՏՀ համարները)

տեխնիկական հանձնաժողովի

ՏՀ անվանումը

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**1.1**

ՏՀ համարը (միջազգային, եվրոպական և միջպետական հայելային ՏՀ համարները)

ՏՀ անվանումը

տեխնիկական հանձնաժողովը (այսուհետ՝ տեխնիկական հանձնաժողովը) կամավոր հիմունքներով կազմավորված կառույց է, որում ընդգրկված են մասնագետներ՝

ՏՀ ոլորտի նկարագիրը

շահագրգիռ կազմակերպություններից: Տեխնիկական հանձնաժողովը հանդիսանում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO)՝ \_\_\_\_\_ և

(կամ) Ստանդարտացման Եվրոպական Կոմիտեի (CEN) \_\_\_\_\_

և (կամ) «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի» (MFC) \_\_\_\_\_ տեխնիկական հանձնաժողովների ազգային հայելային տեխնիկական հանձնաժողովը:

**1.2** Տեխնիկական հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման

## ՀԱՏ 1.12-2022

բնագավառում գործող օրենքներին և այլ իրավական ակտերին, ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներին համապատասխան:

1.3 Տեխնիկական հանձնաժողովը կազմավորվում է \_\_\_\_\_

ուղրտում ազգային և միջպետական ստանդարտների մշակման, միջազգային, միջպետական ստանդարտների մշակման աշխատանքներին մասնակցության, ինչպես նաև ազգային, միջպետական, միջազգային և եվրոպական ստանդարտացման բնագավառում աշխատանքների կատարման համար:

1.4 Տեխնիկական հանձնաժողովը չունի իրավաբանական անձի կարգավիճակ: Գրագրություն վարելու համար տեխնիկական հանձնաժողովը կարող է ունենալ սեփական բլանկ՝ անհրաժեշտ տվյալներով:

1.5 Տեխնիկական հանձնաժողովի աշխատանքների համակարգումը և մեթոդական ուղղորդումն իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմինը:

1.6 Տեխնիկական հանձնաժողովի անվանումն է՝  
հայերեն՝ ՏՀ \_\_\_\_\_  
ռուսերեն՝ ТК \_\_\_\_\_  
անգլերեն՝ TC \_\_\_\_\_:

## 2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

2.1 \_\_\_\_\_ ստանդարտացման

ՏՀ ոլորտի բնութագիրը

ուղրտում տեխնիկական հանձնաժողովը կազմակերպում և իրականացնում է հետևյալ աշխատանքները.

\_\_\_\_\_ ստանդարտացման

աշխատանքների ծրագրի (անհրաժեշտության դեպքում) մշակում,

- Հայաստանի Հանրապետության ստանդարտների նախագծերի մշակում՝ հաշվի առնելով ներդաշնակեցումը միջպետական, միջազգային և եվրոպական ստանդարտներին, ստանդարտների վերանայումը, ստանդարտներում փոփոխությունների կատարման և դրանց չեղյալ հայտարարելու մասին առաջարկությունների նախապատրաստումը, անհրաժեշտ քննարկումները, համաձայնեցումները և ընդունման գործընթացի նախապատրաստումը,

- Հայաստանի Հանրապետության միջազգային, միջպետական և եվրոպական ստանդարտների կիրառման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

- համագործակցություն ստանդարտները կիրառող կազմակերպությունների, փորձարկման լաբորատորիաների, սերտիֆիկացման մարմինների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

**3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ**

3.1. Տեխնիկական հանձնաժողովի կազմը հաստատվում է Ստանդարտացման ազգային մարմնի տնօրենի հրամանով:

3.2 Տեխնիկական հանձնաժողովը ղեկավարում է նախագահը, որն ընտրվում է տեխնիկական հանձնաժողովի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

3.3 Տեխնիկական հանձնաժողովի նախագահի հիմնական գործառույթներն են՝

---

---

---

3.4 Տեխնիկական հանձնաժողովի քարտուղարի հիմնական գործառույթներն են՝

---

---

---

3.5 Տեխնիկական հանձնաժողովի անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները՝

---

---

---

3.6 Տեխնիկական հանձնաժողովի անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները կատարում են իրենց պարտականությունները աշխատանքային տեղում կամ ՏՀ նիստերի (այդ թվում նաև հեռավար՝ առցանց ռեժիմով) ժամանակ:

3.7 Ընթացիկ աշխատանքները կազմակերպելու համար տեխնիկական հանձնաժողովը նշանակում է քարտուղար:

3.8 Տեխնիկական հանձնաժողովի քարտուղարը ընտրվում է տեխնիկական հանձնաժողովի անդամների կողմից:

3.9 Տեխնիկական հանձնաժողովի կազմում պարտադիր պետք է ընդգրկված լինի Ստանդարտացման ազգային մարմնի ներկայացուցիչ (ներկայացուցիչներ):

**4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

4.1 Տեխնիկական հանձնաժողովի նախագահի հիմնական գործառույթներն են՝

---

---

---

## ՀԱՏ 1.12-2022

4.2. Տեխնիկական հանձնաժողովի քարտուղարի հիմնական գործառույթներն են՝

---

---

---

4.3 Տեխնիկական հանձնաժողովի անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները՝

---

---

---

4.4 Տեխնիկական հանձնաժողովի անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները կատարում են իրենց պարտականությունները աշխատանքային տեղում կամ ՏՀ նիստերի (այդ թվում նաև հեռավար՝ առցանց ռեժիմով) ժամանակ:

**Հավելված Գ  
(հանձնարարելի)  
Ստանդարտացման ազգային մարմնի  
ղեկավարի ՏՀ կազմավորման (վերակազմավորման) հրամանի  
օրինակելի ձև**

ՏՀ \_\_\_\_\_  
ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի համարը և անվանումը, միջազգային, եվրոպական և միջպետական հայելային ՏՀ համարը

ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի ստեղծման  
(վերակազմավորման) մասին

ՀԱՄԱՁԱՅՆ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ  
ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել (վերակազմավորել) \_\_\_\_\_  
ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի համարը և անվանումը,  
միջազգային, եվրոպական և միջպետական հայելային ՏՀ համարը

ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովը:

2. Հաստատել \_\_\_\_\_  
ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի համարը

ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի անդամ կազմակերպությունների  
ցանկը (ըստ աղյուսակ 1):

Աղյուսակ 1

h/h	Անդամ կազմակերպությունը	Կազմակերպության լիազոր ներկայացուցչի անունը և պաշտոնը	Հասցեն և կոնտակտային տվյալները
-----	----------------------------	---	-----------------------------------

## ՀԱՏ 1.12-2022

3. Տեխնիկական հանձնաժողովի նախագահ \_\_\_\_\_  
անուն. ազգանուն

- նախապատրաստել և հաստատել \_\_\_\_\_ տեխնիկական հանձնաժողովի  
ՏՀ համարը  
կանոնադրությունը

- իրականացնել տեխնիկական հանձնաժողովի աշխատանքները համաձայն  
ՀԱՏ 1.12-2022 «Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Ստանդարտացման  
տեխնիկական հանձնաժողովներ և ստանդարտացման աշխատանքային խմբեր.  
Կազմավորման և գործունեության կարգը» և ՏՀ \_\_\_\_\_ տեխնիկական հանձնաժողովի  
ՏՀ համարը  
կանոնադրության դրույթների:

4. Ստանդարտացման բաժնի պետ' \_\_\_\_\_  
անուն. ազգանուն

- ապահովել ՏՀ \_\_\_\_\_ տեխնիկական հանձնաժողովի կողմից կատարվող  
ՏՀ համարը

ստանդարտացման աշխատանքների համակարգումը և մեթոդական ղեկավարումը՝  
տեխնիկական հանձնաժողովի կողմից իրականացվող ստանդարտացման աշխատանքների  
արդյունավետ կատարման համար:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել \_\_\_\_\_ :  
պաշտոնը, անուն, ազգանուն

**ՏՆՕՐԵՆ**

---

**Հանգուցային բառեր.** Տեխնիկական հանձնաժողով, աշխատանքային խումբ, նիստ, ընթացակարգ

---

**ՍԴ 01.120**

Գինը սահմանվում է 18 էջի համար

---